

վորված բաժնետոմսերում կատարվող ներդրումների ակտիվացման համար անհրաժեշտ է հաշվի առնել ֆիրմաների արտադրության մասնագիտացման հիմնական ուղղություններն ու դրանց բաժնետոմսերի գնահատման հիմնական ցուցանիշները, որոնցից են.

1. բաժնետոմսերի շահույթի (Շ) և արժեքի (Ա) հարաբերություն (Շ/Ա), որը ԱՄՆ-ի մեքենաշինական ֆիրմաներում հասնում է 3.10%-ից մինչև 5.44%¹,
2. բաժնետոմսերի շուկայական գնի (Շգ) և հաշվեկշռային արժեքի (Հա) հարաբերություն, որը թույլ է տալիս հաշվի առնել ներդրումային հնարավորությունները,
3. բաժնետոմսերի շուկայական գնի (Շգ) և հասույթի (Հ) հարաբերությունը, որն ամենահուսալի գործակիցն է, որի բարձրացումը նպաստում է շահույթի աճին, ընդհանրացնելով արժեքի շուկայի մասնակիցների ներդրումային գործընթացների բնութագրիչների ֆունկցիոնալ գործունեության արդյունքները, գալիս ենք այն հետևությանը, որ այդ արդյունքներով պայմանավորում է արդյունաբերական ընկերության վերականգնման և գործարկման ներդրումների ապահովումը:

ԳԱԳԻԿ ՊԱՐՈՆՅԱՆ

ՀՊՏՀ ասպիրանտ

ՆԵՐՈՂՈՒՄԱՅԻՆ ԶԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՀՀ ՄԱՐԶԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԻՄՆԱՔԱՐ

Ներկա պայմաններում տարածաշրջանային մակարդակում տնտեսական անվտանգության ապահովման հիմնական խնդիրը ՀՀ մարզերի միջև տնտեսական զարգացման մակարդակների տարբերությունն է:

Տնտեսական անհամահարժ զարգացման հիմնական պատճառը հանդիսանում է տարածաշրջանների (մարզերի) տնտեսական զարգացման տարբերությունը, որը պայմանավորված է գիտատեխնիկական, նորամուծական ներուժի, էներգառեսուրսների և բնական հարստության ու կլիմայական պայմանների անհամաչափությամբ: Չնայած նրան, որ ՀՀ-ն չունի լայն աշխարհագրական տարածք, ակնհայտ է տարածաշրջանների միջև տնտեսական անհավասարությունը:

Տարածաշրջանների միջև տնտեսության անհամամասն զարգացումն էլ ավելի է խորանում և առավել ցավալի հետևանքներով է հանդես գալիս սոցիալական զարգացման և կենսամակարդակների տարբերական արդյունքում: Հասնել կայուն տնտեսական զարգացման, գործազրկության նվազման, ՀՆԱ շարունակական աճի, վերջնական արտադրանքի մրցունակության բարձրացման հնարավոր է միայն երկրի բոլոր տարածաշրջանների համամասն զարգացման արդյունքում: Ազգային տնտեսական անվտանգության ապահովման հիմնական գործիք պետք է հանդիսանա նպատակադրված, հատուկ մտածված պետական ներդրումային քաղաքականությունը, որի հիմնական խնդիրը տնտեսական զարգացման տարածաշրջանային համամասնությունների ապահովումն է:

Ներդրումային գործունեության պետական կարգավորման ներկայում գործող համակարգը մեծամասամբ հայեցակարգային-տեսական է, քան իրական գոյություն ունեցող միասնական քաղաքականություն²: Ներդրումային գործունեության պետական կարգավորումը

¹ Исаакян М., Как инвестировать в индексы. 2003г., с.277.

² Տե՛ս «Հայաստանի Հանրապետության ներդրումային քաղաքականության հայեցակարգը» հաստատված ՀՀ կառավարության 2005թ. ապրիլի 21-ի թիվ 15 նիստի արձանագրային որոշմամբ:

տարածաշրջաններում իրականում պահանջում է շատ մեծ վերափոխումներ, որոնցից առաջնայինն է կազմակերպարարական և տեղեկատվական ապահովումը:

Հիմնախնդրի խորը ուսումնասիրության համար պետք է նախ հատկապես սահմանվեն տարածաշրջանների ներդրումային գրավչությունը և այնտեղ իրականացվող ներդրումային գործունեության արդյունավետությունը, ապա մշակվեն վիճակագրական տվյալների գործնական օգտագործման ճկուն ազդեցիկներ, որոնք հնարավորություն կտան բնորոշել ներդրումային գործունեության արդյունավետությունը և ներդրումային գրավչությունը տարածաշրջանում, որի գլխավոր նպատակն է վերացնել տարածաշրջանների միջև տնտեսական զարգացման անհարթությունները:

Նախկինում ՀՀ տարածաշրջանային անվտանգության պետական կարգավորման մեխանիզմի առանձնահատկությունները դրսևորվում էին վարչակարգային-սոցիալական համակարգի պարագայում գործող ներդրումների պլանավորման և ռեսուրսների բաշխման կենտրոնացված համակարգում, որով փոքրիշատե ապահովվում էր տարածաշրջանների միջև թեկուզ «բռնի», սակայն «համահարթ» զարգացում: Թեպետ պետք է նշենք, որ այդ զարգացումը ներուժային համահարթ զարգացում չէր, այլ բխում էր վարչական ու քաղաքական շահերից, ամբողջապես չէր բավարարում ազատ տնտեսական զարգացման օրինաչափություններին: Մակայն, շուկայական տնտեսության անցման ժամանակահատվածում տարածաշրջանները կանգնեցին որոշումների ինքնուրույն կայացման և սեփական ջանքերով կայուն զարգացում ապահովելու հիմնախնդրի առջև: Նոր պայմաններում տարածաշրջանները, որոնց հնարավորություն ընձեռվեց ազատ կայացնել սեփական որոշումները, չկարողացան օգտվել ներդրումային ծրագրերի իրականացման ինքնուրույնության առավելություններից, քանի որ նրանց մոտ քաղաքային էր այդքան ամերսաժեշտ համապատասխան փորձը: Այս պարագայում ներդրումների կարգավորման կենտրոնացված իրականացումը կամ թեկուզ դրանց միասնական կենտրոնացված գնահատման մեթոդների կիրառումը չարդարացրեց սպասումները: Նման քաղաքականության անարդյունավետության մասին է փաստում նաև այն հանգամանքը, որ գնալով խորանում է երկրի տարածաշրջանների հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների միջև օրըստօրե աճող ճեղքվածքը, ինչն էլ հանդիսանում է հրատապ լուծում պահանջող գերիմոխրներից մեկը: Չնայած վերջերս դիտվող հիմնական կապիտալում ներդրումների աճի տեմպի արագացման՝ չի կարելի անտեսել այն հանգամանքը, որ այն տեղի է ունենում հիմնականում տնտեսապես համեմատաբար զարգացած տարածաշրջանում՝ առաջ բերելով առանց այդ էլ խորացող ներդրումային ճգնաժամ մնացյալ տարածաշրջաններում:

Մեր երկրի Ազգային վիճակագրական ծառայության տրամադրած տեղեկատվությունը չի պարունակում երկրի հեռանկարային զարգացման ապահովող հիմնական քաղաքիչի՝ ներդրումների վերաբերյալ տվյալներ մարզային կտրվածքով: Ուստի աշխատանքում փորձ է արվել ինքնուրույն հաշվարկել այդ ցուցանիշը: Չնայած դրա մոտավոր լինելու հանգամանքին՝ այն արժեքավոր կլինի ծանոթացման և տեղեկատվական առումով, իսկ ընդհանրական պատկերացում կազմելու տեսանկյունից՝ շատ տեղին, հրատապ ու անհրաժեշտ:


Տարածաշրջանային առումով ներդրումների ցուցանիշը հաշվարկելու համար Ազգային վիճակագրական ծառայության (ԱՎԾ) տրամադրած «Հիմնական կապիտալի համախառն կուտակում»¹ ցուցանիշը, որը տրվում է միայն համրապետության կտրվածքով, բաշխել ենք ըստ մարզերի՝ հաշվի առնելով շինարարության մարզային կառուցվածքը (գծապատկեր 1): Այսինքն, մեր ունեցած հիմնական կապիտալի համախառն կուտակում (կապիտալ ներդրումներ) ցուցանիշը բաշխել ենք մարզերի միջև հաշվի առնելով շինարարական արտադրության ծավալը՝

¹ Հիմնական կապիտալի համախառն կուտակումն իրենից ներկայացնում է ռեզիդենտ միավորների կողմից միջոցների ներդրումը հիմնական կապիտալի հանդիսացող օբյեկտներում՝ արտադրության մեջ դրանք օգտագործելու ճանապարհով՝ ապագայում նոր եկամուտ ստեղծելու նպատակով:

հիմնական միջոցների պասիվ մասի կշիռները՝ ելնելով այն դատողությունից, որ հիմնական միջոցների ակտիվ և պասիվ մասերի միջև համամասնության պահպանման համար պահանջվում են համամասնական կապիտալ ներդրումներ:

Գծապատկեր 1

Շինարարության կառուցվածքն ըստ մարզերի, միջինը 2001-2007թթ., տոկոսներով¹



Վերոնշյալ եղանակով յուրաքանչյուր տարվա համար համապատասխան կշռով հաշվարկված հիմնական կապիտալի համախառն կուտակման մարզային կտրվածքով տվյալները ամփոփենք աղյուսակով (աղյուսակ 1):

Աղյուսակ 1

Հիմնական կապիտալի համախառն կուտակումը մարզերի կտրվածքով, մլն. դրամ²

	2001	2002	2003	2004	2005	2006	2007	Միջինը 2001-2007
ՀՀ	208,025.00	287,369.00	373,615.00	455,305.00	668,268.00	943,780.00	1,144,988.00	583,050.00
Զ. Երեվան	134,635.23	197,222.30	237,140.77	383,817.94	574,906.03	840,663.30	1,038,302.45	486,669.72
ԱՐԱԳԱՇՈՏՆ	3,395.97	14,686.01	6,770.05	6,614.76	5,940.73	5,026.76	10,105.27	7,505.65
ԱՐԱՐԱՏ	3,247.29	4,320.46	7,809.52	3,585.12	6,152.20	5,425.61	9,245.01	5,683.60
ԱՐՄԱՎԻՐ	2,072.04	3,082.86	2,853.48	4,784.01	8,942.38	6,201.27	8,738.19	5,239.18
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ	4,158.23	4,829.81	5,533.15	4,300.29	4,240.29	6,099.05	7,806.80	5,281.09
ԼՂՈՒ	12,224.55	14,009.12	22,252.41	10,618.79	9,160.33	15,884.00	11,599.06	13,678.32
ԿՈՏԱՅՔ	9,378.45	6,773.35	25,966.49	9,753.18	22,917.00	19,307.32	8,513.68	14,658.50
ՇԻՐԱԿ	9,074.01	26,479.04	40,407.69	10,831.72	4,348.19	5,371.50	12,414.86	15,561.00
ՍՅՈՒՆԻՔ	5,973.04	4,896.82	6,602.99	9,561.08	22,280.42	24,791.06	27,735.04	14,548.64
ՎԱՅՈՑ ՉՈՐ	21,503.88	1,210.80	7,316.78	1,756.68	2,800.97	9,784.94	4,156.81	6,932.98
ՏԱՎՈՒՇ	2,362.31	9,858.43	10,961.68	9,681.43	6,579.47	5,225.18	6,370.81	7,291.33

¹ Աղբյուրը՝ «Հայաստանի Հանրապետության մարզերը քվերով» վիճակագրական ժողովածուներ 1999-2003, 2001-2005, 2003-2007թթ., Հայաստանի ազգային վիճակագրական ծառայություն, www.armstat.am

² Հայաստանի Հանրապետության տվյալները բերված են «Հայաստանի ազգային հաշիվներ» վիճակագրական ժողովածուներից 1990-2001, 2006, 2007, 2008թթ., Հայաստանի ազգային վիճակագրական ծառայություն, www.armstat.am, մարզային բաշխումն իրականացված է ըստ բերված սկզբունքի

Աղյուսակի տվյալներից երևում է, որ մայրաքաղաքի և մարզերի ցուցանիշների միջև առկա է ծայրահեղ բևեռացում. 2001-2007թթ. միջին ցուցանիշի 83.5 տոկոսը բաժին է հասնում Երևանին: Առավել ցայտուն է երևում միայն Երևանի մասնաբաժնի կայուն ու շարունակական աճը, ինչը համատարած չի դիտվում մարզերում՝ որոշ տարիների արձանագրելով անգամ նվազման միտումներ:

Հիմնական կապիտալի համախառն կուտակումը մեկ բնակչի հաշվով ըստ մարզերի բերված է աղյուսակ 2-ում, որի տվյալներից ակնհայտ է դառնում, որ մեկ բնակչի հաշվով ևս կապիտալ ներդրումների ծավալը Երևանում բազմապատիկ անգամ գերազանցում է մարզերի համանման ցուցանիշը, չնայած որ հանրաքանակային բնակչության 32.3 տոկոսը (2008թ. հունվարի 1-ի տվյալներով) կենտրոնացած է մայրաքաղաքում:

Աղյուսակ 2

Հիմնական կապիտալի համախառն կուտակումը մարզերի կտրվածքով մեկ բնակչի հաշվով, դրամ

	2001	2002	2003	2004	2005	2006	2007	Միջինը 2001-2007
ՀՀ	64,746.80	89,514.69	116,311.25	141,583.74	207,588.22	292,835.64	354,474.47	181,007.83
Զ. ԵՐԵՎԱՆ	122,029.57	178,967.60	215,210.79	348,007.93	520,842.57	760,850.12	937,265.25	440,453.41
ԱՐԱՎԱՏՈՏՆ	24,537.36	106,036.15	48,775.58	47,553.97	42,585.85	35,905.42	71,923.66	53,902.57
ԱՐԱՐԱՏ	11,942.97	15,878.22	28,637.77	13,113.08	22,436.91	19,722.33	33,435.86	20,738.16
ԱՐՄԱՎԻՐ	7,496.52	11,137.48	10,290.22	17,196.30	32,028.58	22,131.59	31,030.52	18,758.74
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ	17,493.62	20,293.30	23,199.79	17,985.31	17,712.17	25,455.15	32,514.79	22,093.45
ԼՈՌԻ	42,698.39	49,154.80	78,215.84	37,403.28	32,322.96	56,186.76	41,131.41	48,159.06
ԿՈՏԱՅՔ	34,403.69	24,865.44	95,080.50	35,569.58	83,304.26	69,903.42	30,646.80	53,396.24
ՇԻՐԱԿ	32,029.70	93,731.13	143,188.11	38,451.27	15,451.98	19,095.26	44,181.00	55,161.21
ՍՅՈՒՆԻՔ	39,116.16	32,047.28	43,128.63	62,490.71	145,623.66	162,139.05	181,512.06	95,151.08
ՎԱՅՈՑ ՉՈՐ	383,997.81	21,660.15	131,125.17	31,425.46	50,196.54	175,357.40	74,494.82	124,036.77
ՏԱՎՈՒՇ	17,589.81	73,406.06	81,620.83	72,034.46	48,954.37	38,935.79	47,472.52	54,287.69

Այսպիսով, վերոհիշյալ աղյուսակների տվյալներից պարզ է դառնում, որ մեր հանրապետությունում ներդրումների ներգրավման տեսանկյունից գերիշխող է մայրաքաղաք Երևանը. այստեղ են կենտրոնացնում երկրում իրականացվող ներդրումները, որի հետևանքով առաջանում է աննկարագրելի ծանր հետևանքներով լեցուն բևեռացում մարզերի և մայրաքաղաքի միջև, ինչն էլ, վերջին հաշվով, կարող է հանգեցնել մարզերի ամայացման, տարածաշրջանների տնտեսական հզորությունների քայքայման և վերացման: Մեր կարծիքով, դրա արդյունքում անհնար կլինի երկրի տնտեսական անվտանգության ապահովումը, կմեծանա տնտեսական ու այլ վտանգների հանդեպ խոցելիությունը, ինչպես նաև այդ արհավիրքին դիմակայելու ու հաղթահարելու անկարողությունը:

Նման իրավիճակի պատճառներից մեկը պայմանավորված է հայաստանյան տնտեսության ինստիտուցիոնալ առանձնահատկություններով և երկրի զարգացման միասնական ռազմավարության, հստակ արդյունաբերական և ներդրումային քաղաքականության, ներդրումային գործունեության պետական կարգավորման բացակայությամբ: Ներդրումային գործունեության արդյունավետության գնահատման ցուցանիշների գործող համակարգը նույնպես հնարավորություն չի տալիս սահմանել կոնկրետ խնդիրներ և որոշել դրանց արդյունավետությունը: Այսօր մակրոտնտեսական մակարդակով ներդրումային գործունեության արդյունավետության գնահատման հիմնական ցուցանիշներ կարելի է համարել.

- ներդրումների հավելածը, ՀՆԱ աճը, ազգային սպառման ֆիզիկական աճը և բնակչության մեկ շնչին ընկնող եկամտի աճը,

- կապիտալի, ապրանքների և ծառայությունների շուկաներում տնտեսական կապերի արդյունավետության բարձրացումը, ֆինանսական ռիսկի փոքրացումը,
- ազգային արդյունքի արտադրության և սպառման կառուցվածքի արդյունավետության բարձրացումը, գերակա ճյուղերի կազմակերպությունների ապրանքային թողարկման և շուկայի կապիտալիզացման աճը,
- ազգային ռազմավարական շահերի ապահովումը:

Այդուհանդերձ, պետք է նշել, որ այդ ցուցանիշները ոչ միշտ ունեն օբյեկտիվ թվային (քանակական) արտահայտություն՝ տեղ թողնելով սուբյեկտիվ գնահատման հնարավորության: Պետությունը՝ որպես ներդրումային շուկայի կազմակերպիչ, իրականացնում է սոցիալական լարվածության մեղմացմանը, տարածաշրջանների տնտեսական զարգացման և սոցիալական անհամահարթությունների նվազմանն ուղղված պետական քաղաքականություն: Որպես ներդրումային շուկայի մասնակից պետությունը փորձում է ավելացնել պետական ունեցվածքից և ներդրումներից ստացվող եկամուտները, իջեցնել փոխառությունների արժեքը, արդյունաբերության, գյուղատնտեսության և գիտության կենսականորեն կարևոր ճյուղերում հանդես է գալիս որպես ներդրող, ֆինանսավորում պետական նշանակություն ունեցող ներդրումային նախագծերը:

Այսպիսով, կարող ենք ասել, որ չնայած վերջին տարիներին ներդրումային քաղաքականությունը փոքր-ինչ ակտիվացել է, այդուհանդերձ, հանրապետությունում նկատվում է ներդրումային նախագծերի խիստ պահանջարկ: Այս պայմաններում իրականացվող ներդրումները պետք է ըստ մարզերի բաշխվեն այնպես, որ տարածաշրջանների միջև ապահովվեն տնտեսական զարգացման հավասար տեմպեր: Ներկայում իրականացվող ներդրումային քաղաքականությունը դրսևորում է որոշակի թերություններ, որոնցից, մեր կարծիքով, հիմնական են.

- ներդրումային գործունեության իրականացումը միայն քիչ թվով տարածաշրջաններում և տնտեսության հատուկեմտ ճյուղերում (որպես կանոն ներդրումները կենտրոնացնում են մայրաքաղաքում և տնտեսության սննդի և թեթև արդյունաբերության, շինարարության և ծառայությունների ճյուղերում),
- ներդրումային գործունեության կարգավորման պետական միասնական ռազմավարության բացակայությունը,
- մարզերի տնտեսական զարգացման տարածաշրջանային անհամամասնությունների խորացումը և մայրաքաղաքի ու մարզերի միջև կենսամակարդակային և կենցաղային անհրաժեշտ պայմանների աճող տարբերությունները,
- ինստիտուցիոնալ առանձնահատկությունների, պետական հատուկ ներդրումային քաղաքականության բացակայությունը, որոնց առկայությունը հնարավորություն կտա հայաստանյան ներդրումային օբյեկտների նկատմամբ մեծացնել արտասահմանյան ներդրողների շահագրգռվածությունը, նպաստել օտարերկրյա ներդրումների կոնկրետ և հասցեագրված ներգրավմանը և օգտագործմանը,
- խնայողությունները ներդրումների փոխակերպելու գործում բնակչության պասիվությունը և պետական կարգավորման մեխանիզմների թերացումները՝ փոքր մասնավոր խնայողություններով ներդրումային նախագծերի իրականացման հարցում:

Այսպիսով, մեր երկրի տնտեսական անվտանգության ապահովման հրատապ կարևորության խնդիր է հանդիսանում ՀՀ տարածաշրջանների միջև տնտեսական զարգացման համահավասար տեմպերի ապահովումը և բոլոր հնարավոր ու անհնարին միջոցներով երկրի բնակչության սոցիալական ու տնտեսական բևեռացվածության հաղթահարումը: